

# ԳԻՏՈՒԹԵԱՆ, ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԻՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐ

*Posted on May 25, 2010 by Keghart*



Category: [Opinions](#)



Համօ Մոսկօֆեան, 26 Մայիս 2010

**Տոքթ Մայք, Շելլա ու Շահէ Պօղոսեաններ  
Լիբանան-Անգլիա-Սկոտլիա**

Աշխարհատարած Սփիւռքի գաղթօճախներուն մէջ՝ այսօր կարելի է հանդիպիլ Տոքթ. Մայք Պօղոսեանի բազմաթիւ աշակերտներուն եւ ուսանողներուն: Ան տարիներ շարունակ, Լիբանանի հայ թէ օտար դպրոցներուն մէջ՝ բնագիտութեան ուսուցիչ ու դաստիարակ եղած է: Աշակերտներու ուսման ակարտէն ետք մնացած է անոնց խորհրդատուն եւ օգնականը:

Համօ Մոսկօֆեան, 26 Մայիս 2010

**Տոքթ Մայք, Շելլա ու Շահէ Պօղոսեաններ  
Լիբանան-Անգլիա-Սկոտլիա**

Աշխարհատարած Սփիւռքի գաղթօճախներուն մէջ՝ այսօր կարելի է հանդիպիլ Տոքթ. Մայք Պօղոսեանի բազմաթիւ աշակերտներուն եւ ուսանողներուն: Ան տարիներ շարունակ, Լիբանանի հայ թէ օտար դպրոցներուն մէջ՝ բնագիտութեան ուսուցիչ ու դաստիարակ եղած է: Աշակերտներու ուսման ակարտէն ետք մնացած է անոնց խորհրդատուն եւ օգնականը:

Հայոց Մեծ Եղեռնի վերապրողի արաբախօս զաւակ, ապա՝ «Ալէփօ Գոլէճ»ի ուսանող ու համալսարանական Տոքթ. Մայք Պօղոսեան ուսուցչական ու դասախօսական բազմաթիւ պաշտօններ վարած է լիբանանահայ բոլոր համայնքներուն ու հոսանքներուն պատկանող դպրոցներուն մէջ: Իր արաբերէնի բացառիկ իմացութեամբ, օգտակար դառցած է աշակերտներուն՝ պետական քննութեանց նախապատրաստութեան եւ յաջողութեան դժուարին աշխատանքներուն մէջ:

Օտար համալսարաններու դասախօս այս հայրենասէր եւ ազգասէր հայրորդին, բարձրագոյն ուսման ուղարկած է իր զաւակները: Իր դուստրը՝ Շելլա Պօղոսեան, քանի մը ամիսէն PHD-ի արժանաւոր պիտի դառնայ Էտինսպուրկի համալսարանէն, ուր կ'ուսանի բրիտանական պետութեան յատուկ թոշակով, որպէս երակային հիւանդութիւններու կանխարգիլման մասնագետ եւ հետազօտող:

Նախապէս՝ 2004ին Շելլա Պօղոսեան ստացած էր MSc Health Promotion and Health Education տիտղոսը, նոյնպէս պետական դրամաշնորհով. ապա եւ որպէս փայլուն ուսանողուհի, ակարտին կը հասցնէ իր թէզը, Սկոտլիոյ մեծագոյն համալսարանին մէջ. «Progression of Venous disease in the Edinburgh Vein follow-up study»ի մէջ, զոր պիտի ակարտէ 2011 թուականի Յունիսին:

Որդին՝ Տոքթ. Շահէ Պօղոսեան, Բուրսքի բժշկական համալսարանէն շրջանաւարտ

դառնալէ ետք, անցած է Բրիտանիա, ուր կը վարէ բազմաթիւ գիտական պաշտօններ Ետինպուրկի (Սկոտլոտիա) մէջ: Ան Նոթինկիլդմի համալսարանէն ստացած է Մագիստրոս տիտղոսը Immunology and Allergy-ի մասնագիտութեան մէջ, իսկ Նիւ Քասըլ համալսարանէն արժանաւորուած է PHD-ով: Անդամ է՝ British Society of Immunology-ի, Royal Microscopical Society-ի եւ Արքայական գոլէճին:

Տոքթ. Շահէ Պօղոսեան սերտ կապեր կը հաստատէ Մայր Հայրենիքին հետ: Ուղարկած է 2000է աւելի արժէքաւոր բժշկագիտական գիրքեր: Ան կը համագործակցի զինուորական բժշկութեան պետ՝ Տոքթ. Դաւիթ Միսիթարեանին հետ, անոր հետ կազմելով ծրագիրներ, Հայաստանի բանակին օգնելու բժշկական ճանապարհով, որպէսզի կարողանայ իր դերը կատարել ռազմադաշտին վրայ: Միւս կողմէն, սերտ կապեր ունի լիբանանահայ միութիւններուն հետ՝ բժշկական համագումարներ կազմակերպելու եւ գաղթօճախին օգտակար դառնալու համար:

Կը մաղթենք որ յաջողութիւնները միշտ ուղեկից դառնան Պօղոսեան արժանաւոր ընտանիքի տաղանդաշատ անդամներուն, բժշկութեան, գիտութեան թէ հայ ժողովուրդին ծառայութեան մէջ:

